

հում էին ում որ վիճակ էր ընկնում, այսինքն՝ իրենց հասկացողութեամբ ուղարկում էին զոհին Զալմոքսի մօտ: Տարաբախտ դեպքանք անչուշտ այն անձերի թուին էր պատկանում, որոնք արտօնուած էին վերադառնալու այն աշխարհից, այսինքն՝ կենդանանալու:

Պէտք է ենթադրել, որ աստուծուն այցելելու եւ նորէն դառնալու շնորհը վերապահուած էր առաւելապէս արտատոժոր անձերի, հերոսների, որոնք ընդհանուր առմամբ ծագում էին տիրող իշխանական կամ քրմական տոհմերից: Ընթանալով ի հակառակէն կարելի է ասել, ուր որ հաւատում են ընկած հերոսների յարութեան, այնտեղ կրօնական մըտայնութիւնը նորոգուած պիտի լինի Զալմոքսեան աշխարհայեցողով:

Բաջադործ էրը, թագաւոր Արան եւ հերոս Արտաւազդը նոյն աշխարհայեացքի փշրուած բեկորներն են: Զալմոքս՝ փթթող եւ թառամող բնութեան ողի ոչ այլ ինչ է եթէ ոչ Ատիսի մի ուրիշ հատորը:

Հերոգոտը (IV 93) հաւատացնում է, որ օմանք կարծում էին որ Զալմոքսը նոյն Գերեղիդիսն է, ասել է թէ նոյն աստուծու մի ուրիշ անունն է:

Հաւանական է համարում ուղղել Սերելէդիս, այսինքն՝ առաջին տառը ա կարդալ: Այս ուղղումը կարող է ներշնչել միաք՝ կապել աստուծու անունը յայտնի աստուածուհու Semele Սեմելէի հետ ասուգարանօրէն: Զալմոքս անունը զբում է նաեւ Սալմոքս:

Եթէ իրօք ասուգարանական աղերս կայ Սալմոքսի եւ Սեմելէի մէջ, այդ կը լինէր լաւագոյն մեկնութիւնը պաշտամունքի տեսակէտից: Սեմելէն երկրի աստուածուհի է եւ Սալմոքսը կարող էր նշանակել որդի Սեմելէի:

Սակայն, յատուկ անունների, մանաւանդ հին աստուածների, ասուգարանութիւնը դրժուարին է եւ միշտ վիճելի: Դեռ եւս հերքը հետաքրքրում էին Զալմոքս անուն կազմով եւ կարծում էին, որ նա նշանակում է արջի կաշի՝ (Vorphyr Vita Pythag. էջ 14) իրր թէ Զալմոքսը ծնուելիս վրան արջի կաշի են ձգում:

Նորերը փորձեցին արդարացնել այս ըստուգարանութիւնը: Յայտնի ասորագէտ եւ հայագէտ Գը Լադարդը սկզբում արամաղիք

էր համեմատել վերջին վանկը — mfnu հայերէն կաշի բառի հետ (Zur Urgeschichte der Armenien, էջ 39): Բայց հետագայում նա հրատարակեց իր մեկնութիւնից, գերադասելով տեսնել առաջին Զալմ վանկում պարսիկ չարմ carm, սանսկ. carman որ նշանակում է կաշի (Gesammelte Abh. էջ 291):

Այս մեկնութիւնը հաւանութիւն գտաւ Տոմաշկի կողմից, միայն հակառակ Գը Լադարդի, որ վերջին մասը — mfnu համարում էր հայերէն արջ բառը, առաջարկում է մի ուրիշ մեկնութիւն (Die Alten Thraker II 66):

Անտարակոյս հին ասուգարանութիւնը, որ աշխատում են հաստատել յիշեալ զիտնականները, լուրջ հիմ չունի եւ հետո է Զալմոքսի իսկական իմաստը մեկնելուց: Սովորական նմուշ այսպէս կոչուած ժողովրդական ասուգարանութեանց: Հաւանօրէն Զալմոքս որեւէ հնչական մերձաւորութիւն է ունեցել իրապէս թէ առերեւոյթ այս կամ այն բառին արջ եւ կաշի նշանակութեամբ: Այստեղից յառաջ է եկել եւ այն յերիւրանքը, որ աստուծու վրան արջի կաշի են ձգել եւ որ միանգամայն անարժէք է: Բառի ծագումը մնում է տակաւին խնդրական:

Ամէն մի փորձ մեկնելու հին անուններ, ինչպէս ասացինք, համարելու է միշտ թէսական: Այս վերապահութեամբ մեր կողմից կ'առաջարկէինք մի ուրիշ ասուգարանութիւն, որ բղիւնում է աստուածութեան ներքին կրօնական բովանդակութիւնից:

Վերեւ հնարաւոր համարեցինք Զալմոքսի բառական կապը Սեմելէի հետ: Ոմանք համեմատում են Սեմելէ սլաւոն զեմլիա zemlia բառի հետ, որ նշանակում է երկիր: Մեզ թրւում է, որ Zalmox-is կարող է համապատասխանել իրանական zamaregus բառին, որ ասել է երկրաթագ, երկրի մէջ թաղնուած, zamara երկիր, թրակիական ձուր պէտք է հնչէ zamol եւ gus սանսկ. guha թաղուն՝ դէնդ. gaoz թաղցնել: Ուրեմն zamor-g(u)z —, յունական —is վերջաւորութեամբ zamorgz-is zamor x-is:

Լեզուազիտական ոչ մի անպատահուածութիւն: Իսկ իմաստի կողմից կատարելապէս արդարացնում է այն, ինչ որ գիտենք Զալմոքսի մասին: Նա է, որ երեք տարի շարու-